ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայագիտության մեջ իր ուրույն տեղը զբաղեցրած ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի պատմագիտական ժառանգության մաս են կազմում Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: «Գիտնական, որը հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության արդիական հիմնահարցերին նվիրված մեծարժեք աշխատություններով հարստացրել է պատմական գիտությունը»[1]:

Եվ հենց Մեծ եղեռնի սոսկալի, ճշմարիտ իրականությունը լուսաբանելով՝ Մ. Ներսիսյանը դրեց այն անկյունաքարը, որի վրա բարձրանալու էր Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը՝ հիմք դնելով նոր ուղղության և դարձյալ տեր դառնալով (ինչպես և ազգային-ազատագրական շարժման լուսաբանման հարցում) այդ հիմնահարցի մասին առաջինը բարձրաձայնող հեղինակի իր իրավունքին: Հայրենասեր պատմաբանն առաջիններից մեկն էր, ով քաղաքացիական համարձակությամբ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրերին հնչեցրեց իր հեղինակավոր խոսքը՝ թարմ ու խորունկ դիրքորոշմամբ: 1965 թ. ապրիլի 24-ին «Պրավդա» թերթում լույս տեսավ նրա և պրոֆ. Ն. Ուշակովի հոդվածը՝ Հայոց ցեղասպանության մասին[2], որտեղ համարձակորեն ասված էր. «Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտավորապես մեկ ու կես միլիոն հայ»:

Ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ արևմտյան տերությունների ունեցած վերաբերմունքը շարունակվեց նաև Մեծ եղեռնի տարիներին: Հենց նույն քաղաքականության տրամաբանական շարունակությունն է նկատում Մ. Ներսիսյանը, երբ միանգամայն իրավացիորեն եզրակացնում է. «Նույն արևմտյան պետությունների «չեզոքության» և հովանավորող քաղաքականության պայմաններում թուրքական ջարդարարները կազմակերպեցին հայ բնակչության մասսայական կոտորածներ 1909 թվականին Ադանայում և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայում: Այդ տարիներին, ինչպես հայտնի է, Իթթիհատի

---

[1] *Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Գիտնականը, քաղաքացին, հասարակական գործիչը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի ծննդյան 95-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2005, № 3, էջ 3:*

[2] М. Н е р с и с я н. Геноцид – тягчайшее преступление перед человечеством.– «Правда», *24. IV. 1965:*

դահիճները սրի քաշեցին մեկ միլիոն մարդ: Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի այս մասսայական ջարդերի համար քիչ հանցանք չունեն նշված պետությունները, որոնք… հանդես եկան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ»[3]*:*

Դեռևս 1955 թ. հրատարակած իր ծավալուն հոդվածում[4] *Մ. Ներսիսյանը հանգամանորեն անդրադարձավ Հայոց ցեղասպանության հարցին: Նա Հայաստանի կենտրոնական պատմական արխիվում և ԳԱ պատմության ինստիտուտի արխիվի պրոֆ. Լեոյի ֆոնդում հայտնաբերեց և 1965-ին հրապարակեց թվով ինն արժեքավոր փաստաթղթեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ*[5]*, որոնք լուսաբանում են հետաքրքրություն ներկայացնող շատ կարևոր հարցեր:*

Մ. Ներսիսյանը հայերի զանգվածային կոտորածները որակեց որպես ցեղասպանություն-գենոցիդի քաղաքականություն, որը մշակվեց և իրականացվեց երիտթուրքերի կառավարության արյունարբու դահիճներ՝ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի կողմից, նախօրոք մշակված ծրագրերով, հակառակ անհիմն այն պնդումների, թե ցեղասպանությունը բխում էր պատերազմի հանգամանքներից և այն տեղի ունեցավ դրա հետևանքով: Սակայն վերոհիշյալ ինը փաստաթղթերի վերլուծությունը վկայում է, որ Հայոց ցեղասպանության ուրվականը շրջում էր դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից առաջ: «Այս ինն արխիվային փաստաթղթերում նկարագրվում է արևմտահայերի ծանր դրությունը 1912–1914 թթ. և նրանց զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից 1915–1916 թթ.: Այդ նյութերի հեղինակների մեծ մասը համարվում են Արևմտյան Հայաստանում և ամբողջ Թուրքիայում կատարված արյունալի դեպքերի վկաները»[6]*,– եզրակացնում է Մ. Ներսիսյանը:*

Այս արժեքավոր փաստաթղթերի հրապարակմամբ Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ հանրապետությունում հիմք դրվեց Մեծ եղեռնի վերաբերյալ արխիվային փաստաթղթերի հավաքման ու մշակման մեծ և կարևոր նշանակություն ունեցող աշխատանքին: Վերոհիշյալ փաստաթղթերն էլ հենց դարձան այն հենքը, որի վրա բարձրանալու էր 1966 թ. Մ. Ներսիսյանի առաջաբանով և խմբագրությամբ ռուսերենով հրատարակված, երկարատև որոնումների արդյունք հանդիսացող մեծարժեք ծավալուն ժողովածուն[7]*, որպես մնայուն պատմական տարեգրություն Հայոց ցեղասպանության վերաբերյալ: 1982-ին լույս տեսավ ժողովածուի երկրորդ, լրացված հրատարակությունը, իսկ 1991-ին այն հրատարակվեց հայերեն թարգմանությամբ*[8]*:*

---

[3] *Մ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 339:*

[4] *Մ. Ներսիսյան. Արևմտահայերի մասսայական կոտորածները 1915-1916 թվականներին.– ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1955, № 5:*

[5] *Մ. Ներսիսյան. Նյութեր հայկական կոտորածների մասին.– ՊԲՀ, 1965, № 1, էջ 85-100:*

[6] *Մ. Ներսիսյան. Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982, էջ 373:*

[7] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна. Составители: М. Нерсисян, Р. Саакян. Ереван, 1966.

[8] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմ.՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, 1991: Ի դեպ, Վ. Պողոսյանը իր հրապարակման մեջ («Հայոց ցեղասպանությունը Օսմանյան*

Հայոց ցեղասպանության ժամանակագրական սահմանների վերաբերյալ կան տարակարծություններ: Պատմագրության մեջ գոյություն ունի այն տեսակետը, ըստ որի Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915 թ., ելնելով զոհերի քանակից՝ շուրջ 1,5 միլիոն, որին նախորդել են Համիդյան և հաջորդել քեմալական կոտորածները: Մ. Ներսիսյանը, հանդես բերելով ավելի լայն և ընդգրկուն մոտեցում, քննադատում է այն պատմաբաններին ու հրապարակախոսներին, ովքեր գտնում են, որ XIX դարի 90-ական թվականներին Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածները չպետք է համարել ցեղասպանություն, այլ պատժողական նպատակներ հետապնդող ջարդեր ու հալածանքներ: Պատմական փաստերի մանրազնին ուսումնասիրությամբ մեծավաստակ պատմաբանը հանգել է այն ճշմարիտ եզրակացության, որ գազանաբարո «կարմիր սուլթանը» նույնպես կիրառել է ցեղասպանության քաղաքականություն, մի քաղաքականություն, որը իրագործեցին երիտթուրքերը 1915–1916 թթ.: Այստեղ կարևոր չէ զոհերի քանակը՝ մի դեպքում 300 հազար, մյուս դեպքում՝ 1,5 միլիոն: Հայտնի են նաև փոքր ծավալի ցեղասպանություններ: Երկու դեպքում էլ կատարվել է ցեղասպանություն պետական մակարդակի հասցված քաղաքականությամբ, թողնելով սև էջեր հայոց պատմության մեջ:

Մ. Նեսիսյանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1915–1916 թթ. մարդկային կորուստներն ահռելի էին, այն բնութագրել է Մեծ եղեռն: Դաժան ցեղասպանության քաղաքականություն կիրառվել է նաև 1920-1922 թվականներին Մ. Քեմալի կողմից:

Ժողովածուն բաղկացած է երկու մասից: Առաջին մասում տեղ են գտել սուլթան Աբդուլ Համիդի օրոք (1876–1908 թթ.) հայերի կոտորածներին վերաբերող նյութերը: Երկրորդ մասն ավելի ընդարձակ է և կրում է «Հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909–1918 թթ.)» վերնագիրը: Այն մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև օտարազգի ընթերցողների շրջանում: Դրանով հիմք դրվեց Մեծ եղեռնի գիտական հետազոտության սկզբնավորմանը:

Մ. Ներսիսյանը գրքի նախաբանում բացահայտում է թուրք ջարդարարների կազմակերպած ցեղասպանության դրդապատճառները և մեծ տերությունների հանցավոր մեղքն ու անտարբերությունը կատարվածի հանդեպ, այդ հենքի վրա ներկայացնելով իր մոտեցումները հայերի ցեղասպանության, հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցի վերաբերյալ, կատարում ընդհանրացումներ և տալիս ուղենշային գնահատականներ:

Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված այս ժողովածուն, կարելի է ասել, Հայոց ցեղասպանությունը ներկայացնող փաստաթղթերի լայն համայնապատկեր է, անսպառ մի աղբյուր և այն ակունքը, որից «ջուր են խմել» Մեծ եղեռնի պատմությունն ուսումնասիրողները: Ժողովածուում ամփոփված փաստաթղթերը պարունակում են ոչ միայն չարագործությունների նկարագ-

---

կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի լույսընծայման նախապատմության շուրջ.– ՊԲՀ, 2010, № 1, էջ 234) որոշ մանրամասներ է ներկայացրել այդ արժեքավոր ժողովածուի հրատարակման վերաբերյալ:

րություններ, այլև հավաստի ու ճշմարտապատում վկայություններ, որոնք արժանի են ուշադրության: Այնտեղ փաստերը խոսուն են ու համոզիչ, տպավորիչ ու զայրացուցիչ, մարդկանց հիշողության մեջ մնայուն ցավալի ողբերգություն ու տառապանք:

Ժողովածուն ներառում է տարբեր երկրների արխիվային փաստաթղթեր, հեղինակի խոսքերով ասած՝ դրանք պաշտոնական զեկուցագրեր են, հաղորդումներ, դիմումներ գրված տարբեր պետությունների ղեկավարների կողմից, ինչպես նաև հոգևոր անձանց և միսիոներների տված ցուցումներ Թուրքիայում կատարված ահավոր սպանդի մասին, որտեղ ընթերցողը փաստերի առատության հենքի վրա տեսնում է հայ ժողովրդի այդ «սև օրերի» մղձավանջն ու ամբողջական պատկերը: Այն մի հարուստ ժառանգություն է, խոսուն վկա՝ գալիք սերունդներին, որի յուրաքանչյուր տողն ասես շշնջում է, հիշեցնելով XX դարի ամենամեծ ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը:

Բազմավաստակ պատմաբանը, հիմք ընդունելով տարաբնույթ մի շարք աղբյուրներ, որոնք հաստատում են Հայոց ցեղասպանության անժխտելի իրողությունը, միաժամանակ քննադատական վերաբերմունք ունի դրանցում տեղ գտած որոշ անճշտությունների վերաբերյալ: Այսպես, ըստ Մ. Ներսիսյանի, մի շարք փաստաթղթերում գերագնահատված է մահմեդական խաժամուժի և քրդական ցեղերի դերն ու նշանակությունը, երբ խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության պատճառներին: Պատմության կեղծարարները պնդում են, որ Մեծ եղեռնի հիմնական պատճառը եղել է 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը և Վանի 1915 թ. ապստամբությունը: Մ. Ներսիսյանը, մերժելով այս անհիմն պատճառաբանությունը, գտնում է, որ Վանի ապստամբությունը ինքնապաշտպանական կռիվ էր, նրանք ստիպված էին դուրս գալ տիրող կարգերի դեմ և ավելացնում, որ մեծ ոճիրի պատճառը թուրք ազգայնամոլների ծրագրերն էին, մշակված դեռևս 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած գաղտնի ժողովներում, ինչը, ի դեպ, տարիներ անց հաստատում են 1919 թ. Կ. Պոլսում և 1921 թ. Բեռլինում տեղի ունեցած դատավարությունների հրապարակած նյութերը, որոնց կարևոր նշանակություն է տալիս պատմաբանը: Նրա գնահատմամբ, դրանք կասկած չեն թողնում, որ երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունը կատարվել է կանխամտածված ծրագրով, ունենալով պանթուրքիստական նպատակներ, ինչն էլ իր շրջանակներում ներառում էր հայ ժողովրդի զանգվածային կոտորածները:

Պատմաբանի հավաստմամբ, փաստաթղթերի մի այլ խումբ կարող է թյուր պատկերացում ստեղծել, թե, իբր, մեծ տերությունները մտահոգված էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններով և միջոցառումներ են ձեռնարկել այն կասեցնելու համար, ինչը հեռու է ճշմարտությունից, որովհետև իրականությունը հակառակն է ապացուցում:

Մ. Ներսիսյանը համամիտ չէ նաև փաստաթղթերում արտահայտված այն կարծիքին, թե, իբր, հայերը այդ ոճրագործությանը արժանի հակահարված չեն տվել: Վկան՝ 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը: Բայց օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները անհնարին են դարձրել հայերի համար հնարավոր

հաջողությունը՝ ուժերն անհավասար էին, զենքի ընդունակ մարդիկ զորակոչվել էին բանակ և ոչնչացվել:

Մ. Ներսիսյանը, անդրադառնալով 1890-ական թվականներին իրականացված համիդյան արյունոտ քաղաքականությանը, գտնում է, որ այն շարունակեցին երիտթուրքերը, որոնք, լինելով ջերմեռանդ պանթուրքիստներ, գերազանցեցին նախորդին, չնայած որ իշխանության գլուխ անցնելուց առաջ հայտարարում էին ժողովուրդների եղբայրության, ազատության և հավասարության մասին: Սակայն իշխանություն ձեռք բերելուց հետո մոռացան իրենց տված խոստումները և 1909 թ. Ադանայի կոտորածով ցույց տվեցին, որ իրենք նույն բռնակալներն ու ջարդարարներն են, և որ շարունակելու են «կարմիր սուլթանի» որդեգրած քաղաքականությունը: Նա իրավացիորեն նկատում է, որ այդ՝ ոչնչի առջև կանգ չառնող ազգայնականները նպատակ ունեին «թուրքացնել» կայսրությունը՝ բոլոր ոչ թուրք ժողովուրդներին բռնությամբ ձուլելու և ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով: Եվ դա ամենից առաջ կիրառեցին արևմտահայության նկատմամբ:

Մ. Ներսիսյանը մատնանշում է Թուրքիայի այն ժամանակվա պատասխանատու մի շարք պաշտոնյաների հուշագրություններում, ինչպես նաև զեկուցագրերում պահպանված տեղեկություններն այն մասին, թե ինչպես երիտթուրքերի պարագլուխների գաղտնի խորհրդակցության ժամանակ ոչ անհայտ դոկտոր Նազիմ բեյն այսպես է արտահայտվել. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում և մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի հարմար իրադրություն էլ չի լինի… Անհրաժեշտ է ոչնչացնել մինչև վերջին մարդը…»[9]: Նման ոգով ելույթ են ունեցել Թալեաթը և հայ ժողովրդի մյուս դահիճները: Ասվածը դարձյալ պարզ է ուղիղ գծի գաղափարի նման:

Հրապարակի վրա առկա գրականությունը, արխիվային հարուստ ու բազմաբովանդակ նյութերը, բազմաթիվ ուսումնասիրությունները, ջարդերից փրկված ականատեսների վկայությունները, նրանց հուշերն ու ցուցմունքները, տարբեր երկրներում հրատարակված գիտական աշխատությունները և ժողովածուում տեղ գտած տարբեր պետությունների հյուպատոսների, բարձրաստիճան պաշտոնյաների զեկուցագրերը, տեղեկագրերն ու նամակները աղաղակում են Հայոց ցեղասպանության փաստը: «Սակայն, մեղմ ասած,– գրում է Մ. Ներսիսյանը,– զարմանք է պատճառում մի հանգամանք. ժամանակակից Թուրքիայի պաշտոնատար շատ անձինք և «մտավոր աշխատանքի» շատ ներկայացուցիչներ, անպատկառորեն ոտնակոխ անելով պատմական ճշմարտությունը, ձգտում են ժխտել Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած հայերի ցեղասպանության փաստը: Զուր ջանքեր: Խայտառակ այդ փորձերը, սակայն, շինծու են և անհեթեթ»[10]:

Այո, զարմանալի է, երբ նորահայտ փաստերով հարստանում է Հայոց ցեղասպանության մասին գիտական աշխատությունների ցանկը, իսկ թուրքա-

---

[9] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Նախաբան, էջ IX:*

[10] *Նույն տեղում, էջ XXIII:*

կան պատմագրությունը, պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլը, թուրք մտավորականությունը, կառավարող շրջանների պաշտոնատար անձինք դեռ մերժում են տեղի ունեցած ոճրագործությունը:

Իր «Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը» հոդվածում[11], խոսելով հայերի կոտորածների մասին, Մ. Ներսիսյանը վկայակոչում է ռուս անվանի արևելագետ Վ. Գորդլևսկուն, ով եղել է ռուսական զորքերի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում ու գյուղերում: Նա Բիթլիսով անցնելիս լսել է, թե ինչպես փողոցները, տները, որտեղ ապրում էին հայերը, եկեղեցիներն ու վանքերը լցված էին դիակներով, կանայք ընկած էին բռնաբարությունից հետո սպանված, դիակները թափված էին երբեմն ածխացած՝ ինչպես խորոված խոճկորներ և շատ տպավորիչ հաղորդում է. «Դա սպանդ էր, ժողովրդի աննախադեպ ջարդ: Մարդիկ ասես կորցրել էին խիղճը: Բայց ամաչել էր Եփրատը և լաց եղել արյուն-արցունքով: Մուշի մոտակա կամուրջն իր վրա տակավին պահպանում է շերտերը, այն հետքերը, երբ գետն արյունից վարարել էր: Այդպես զոհվեցին մեկ միլիոնից ավելի հայեր»[12]:

Պատմության կեղծարարները ինչպես կբացատրեն թեկուզ հենց այս փաստը: Ավելի հեռանալով ճշմարտությունից, նրանք փորձում են ապացուցել, որ երիտթուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխամտածված ծրագիր, որ ռազմական իրավիճակից ելնելով արևմտահայերին տեղափոխել են երկրի խորքերը, և թե պատերազմի տարիներին զոհվել են թե՛ հայերը և թե՛ թուրքերը: Այդ աղաղակող փաստերն են հենց աշխարհահռչակ Ֆ. Նանսենին բերել այն եզրակացության, որ հայերի նկատմամբ երիտթուրքերի գազանությունները «իրենց չափերով և քստմնելի դաժանությամբ գերազանցում են այն բոլորը, ինչ հայտնի է պատմությանը… Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ այնպիսի մի ահավոր գլուխ, որը ստվերում է թողնում նախընթաց բոլորը»[13]:

Մ. Ներսիսյանը նշում է, որ բոլորին էլ քաջ հայտնի է, թե ինչպես 1910–1911 թթ. երիտթուրքերի խորհրդակցություններում հնչել է ոչ թուրք ժողովուրդներին բռնի թուրքացնելու կամ ոչնչացնելու գաղափարը: «Եզրակացությունը պարզ էր,– գրում է նա «Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին» հոդվածում,– պետք է դիմել բռնի միջոցների: Եվ այլազգիներին վերացնելու որոշումը վերջնականապես հաստատվեց նույն Սալոնիկում 1911 թ. տեղի ունեցած գաղտնի ժողովում: Հենց այդ տարիներին արդեն պարզ դարձավ, որ երիտթուրքերը նախապատրաստում են զանգվածային կոտորածներ»[14]:

---

[11] *Մ. Ներսիսյան. Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը.– Պատմության կեղծարարները, Երևան, 1988, էջ 100-115:*

[12] *Նույն տեղում, էջ 101:*

[13] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 709-710, նաև՝ նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 101:*

[14] *Մ. Ներսիսյան. Պատմության կեղծարարները, էջ 102, նաև՝ նույնի՝ Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին.– Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 81:*

Մ. Ներսիսյանը վկայակոչում է Նայիմ բեյին և Քեմալ փաշային, ովքեր համարձակություն են ունեցել հաստատել Մեծ եղեռնի փաստը: Ահա Նայիմ բեյի համարձակորեն ասած խոսքերը. «Ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը… իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»[15]:

Նույնն ընդունում է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ փաշան (ով 1919–1922 թթ. նույնպես կոտորածի ենթարկեց հարյուր հազարավոր հայերի), շվեդական լրագրողներից մեկին տված իր հարցազրույցի ժամանակ, քննադատելով երիտթուրքերին, հայտարարեց, որ նրանք պետք է պատասխան տան միլիոնավոր քրիստոնյաների կոտորածների համար[16]:

Մ. Ներսիսյանիը գրում է. «Այսպիսով, այլազգի հեղինակների, ինչպես և ջարդերից փրկված հայերի վկայությունները, որոնց թիվը նույնպես մեծ է, կասկած չեն թողնում այն մասին, որ երիտթուրքերի կառավարությունը 1915–1916 թթ. իրոք կազմակերպել է արևմտահայության Մեծ եղեռնը»[17]:

Մ. Ներսիսյանը պահանջում է մերժել պատմագիտական գրականության մեջ գոյություն ունեցող այն սխալ տեսակետը, թե իբր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են ղեկավարել Թուրքիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականությունը, որ երիտթուրքերը միայն կատարել են գերմանացի զինվորականների ու դիվանագետների կամքը: Նա շեշտում է այն իրողությունը, որ Մեծ Եղեռնի գլխավոր հանցագործները երիտթուրքական գործիչներն էին, որ նրանք ոչ թե գերմանացիների կամակատարն էին, այլ երիտթուրքերն ունեին իրենց կանխամտածված բարբարոսական ծրագրերը:

*Պատմաբանը կասկածից վեր է համարում, որ «*Մեծ Եղեռնի գլխավոր, հիմնական մեղքը ընկնում է Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաների և մյուս ռազմաշունչ գործիչների վրա, գործիչներ, որոնք Հայկական հարցում հետևողականորեն և ամենայն համառությամբ հետապնդում էին իրենց խիստ էքսպանսիոնիստական, ջարդարարական ու ավանտյուրիստական ծրագրերը»[18]:

Մ. Ներսիսյանը այս տեսակետից էլ մերժում է նաև Հայոց ցեղասպանության հարցում կրոնական գործոնի գերագնահատման փորձերը, փորձեր, որոնք ջանում են պակասեցնել թուրք ռազմաշունչ զինվորականների պատասխանատվությունը:

---

[15] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 559, նաև՝ ն ո ւ յ ն ի՝ Պատմության կեղծարարները, էջ 104:*

[16] *Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Պատմության կեղծարարները, էջ 104:*

[17] *Նույն տեղում, էջ 107:*

[18] *Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը.– Պատմության կեղծարարները, էջ 128, նաև՝ ն ո ւ յ ն ի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 11 (այս և հետագա մեջբերումներում ընդգծումները Մ. Ներսիսյանինն են):*

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, շարունակելով մանրազնին ուսումնասիրությունը, փաստում է անհերքելին, շեշտելով, որ «Օսմանյան կայսրության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իսկապես տեղի են ունեցել արևմտահայերի զանգվածային կոտորածներ, իսկական ցեղասպանություն՝ հրեշավոր իր դաժանությամբ ու բարբարոսությամբ»[19]*:*

Խոսելով այն աղբյուրների մասին, որոնք հաստատում են Հայոց ցեղասպանության փաստը՝ Մ. Ներսիսյանն ամենից առաջ նկատի ուներ գերմանական ու թուրքական սկզբնաղբյուրները և հենց նախապատվությունը տվել է դրանց[20]*:*

Հայտնի է, որ Թուրքիան և Գերմանիան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակիցներ էին, և վերջինս տեղյակ էր Թուրքիայում կատարվող անցուդարձին, նրա ծրագրերին, այդ թվում Հայոց ցեղասպանության նախօրոք մշակված ծրագրին, որի իրագործումը կատարվում էր Գերմանիայի գիտությամբ ու համաձայնությամբ: Այդ է պատճառը, որ, գիտակցելով իրենց պատասխանատվությունը արևմտահայության ցեղասպանության գործում, Գերմանիան անում էր ամեն ինչ, որպեսզի թաքցնի կատարվող ոճրագործությունը: Ռազմական գրաքննությունը պահանջեց չգրել հայկական ջարդերի մասին, դեռ ավելին, հերքում է հայերի զանգվածային կոտորածների մասին բարձրաձայնվող ամեն մի ճշմարտություն: Բայց չէ՞ որ նույն այդ ջարդերի մասին Գերմանիայի կառավարող շրջանները ստանում էին տեղեկություններ, գաղտնի պաշտոնական զեկուցագրեր: Մ. Ներսիսյանը վկայակոչում է դրանք հաստատող հետևյալ փաստերը:

Թուրքասեր բարոն ֆոն Վանգենհայմը, ով 1912–1915 թթ. Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանն էր, ունենալով քաղաքական շահերի և գործելակերպի ընդհանրություն, սերտ բարեկամական կապեր հաստատեց Էնվեր ու Թալեաթ փաշաների հետ և լավատեղյակ էր երկրում կատարվող իրադարձություններին: Եվ ահա, ըստ ամենայնի խիստ ազդեցիկ, երիտթուրքերին ամեն կերպ հովանավորող այս դեսպանը Գերմանիայի կանցլեր Բետման-Հոլվեգին ուղղված 1915 թ. հունիսի 17-ի իր գաղտնի զեկուցագրում հաղորդում էր. «Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը հետևանք է միայն ռազմական նկատառումների: Ներքին գործերի մինիստր Թալեաթ Բեյը վերջերս առանց քաշվելու հայտարարել է կայզերական դեսպանատանը այժմ հավատարմագրված դոկտոր Մորդմանին, որ «Բարձրագույն Դուռը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ, *ընդ որում առանց հարուցելու դիվանագիտական միջամտություն արտասահմանից»*[21]*:*

Պարզից էլ պարզ, անհերքելի ճշմարտություն: Այստեղ Մ. Ներսիսյանը հատկապես ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ դեսպանը նույ-

---

[19] *Մ. Ներսիսյան. Անհերքելի փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության մասին, էջ 85:*

[20] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 138-150:*

[21] *Նույն տեղում, գ. 248, թ. 25:*

նությամբ հաղորդել է այն, ինչ ասել է հայ ժողովրդի դահիճ Թալեաթ բեյը թուրքական կառավարության բարբարոսական ծրագրի մասին:

Այնուհետև Վանգենհայմը, խոսելով հայ բնակչության բռնի տեղահանությունների մասին, միաժամանակ ավելացնում է, որ տեղահանված վայրերին թշնամական որևէ ներխուժում չի սպառնում: 1915 թ. հուլիսի 7-ի զեկուցագրում նա իր միտքը ավարտում է հետևյալ տողերով. «Այդ գործողությունները և այն ձևերը, որոնց միջոցով կատարվում են դրանք, վկայում են այն մասին, որ կառավարությունը իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը թուրքական պետության մեջ»[22]*:*

Հրեշավոր ծրագիրը իրագործվեց: 1915 թ. օգոստոսի 31-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանատան պատասխանատու աշխատողներից մեկի՝ Կյոպպերտի կողմից կազմված պաշտոնական արձանագրությունից պարզվում է, որ Թալեաթ բեյը գերմանական դեսպանատանը խոսել է հայերի մասին: Արձանագրության մեջ գրված է. «Միաժամանակ Թալեաթ բեյը հայտարարեց, որ հայերի դեմ ուղղված գործողությունները հիմնականում իրագործվել են: Հայկական հարցն այլևս գոյություն չունի»[23]*:*

Բերենք մեկ փաստ ևս: Դեսպան Վանգենհայմին ժամանակավորապես փոխարինող կոմս Հ. Լանգենբուրգը 1915 թ. սեպտեմբերի 4-ին ռայխսկանցլերին ուղղած իր զեկուցագրում գրում է, որ «մի քանի օր առաջ (օգոստոսի 31-ին) դեսպանատուն եկավ Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը և իմ ներկայությամբ թույլ տվեց մի այսպիսի արտահայտություն. «Հայկական հարցն այլևս գոյություն չունի»[24]:

«Ահա և հրեշավոր ճիվաղի անկեղծ խոստովանությունը»[25],*– ընդգծում է Մ. Ներսիսյանը:*

Տարբեր երկրների դիվանագետների, բարձրաստիճան պաշտոնյաների, թուրքական աղբյուրների հաղորդումներից Մ. Ներսիսյանը վկայակոչում է Հայոց ցեղասպանությունը ժխտող երկրներին՝ իրենց իսկ արխիվներում պահված խոսուն փաստերով, ներկայացնում անհերքելին:

Այսպիսով՝ Մ. Ներսիսյանը հերքում է պատմության կեղծարարների և հատկապես թուրք պատմաբանների այն տեսությունները, թե, իբր, հայերի ցեղասպանությունը հորինվել է հենց իրենց՝ հայերի կողմից, և որ հայկական «ապստամբություններն» են եղել Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառը: Պատմաբանը, վերհանելով աղբյուրների թուրքամետ բնույթը, ընդգծում է, որ այդպիսիք նույնպես ընդունում են արևմտահայության ցեղասպանության փաստը: Բերված բոլոր վկայությունների, դժոխքից հրաշքով փրկված ականատեսների, տարբեր երկրների հասարակական-քաղաքական, դիվանագիտական, ռազմական, կրոնական, մշակութային գործիչների հաղորդած տեղեկությունների համադրմամբ ու լուսաբանմամբ նա ապացուցում է, որ արևմտահա-

---

[22] *Մ. Ներսիսյան. Անհերքելի փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության մասին, էջ 90:*

[23] *Նույն տեղում, էջ 91:*

[24] *Նույն տեղում:*

[25] *Նույն տեղում:*

յության նկատմամբ կատարված ցեղասպանությունն ամենածանր հանցագործությունն է՝ կազմակերպված սուլթան Աբդուլ Համիդի ու երիտթուրքերի կողմից, նախապես ծրագրված և դաժանորեն իրագործված, պետական մակարդակի հասցված մի քաղաքականություն, որի նպատակն էր թուրքացնել կայսրության բոլոր ազգություններին բռնի ձուլման միջոցով, ստեղծել միաձույլ, էթնիկական միատարր ու հզոր պետություն, որ ընդունակ լինի դիմելու նոր ագրեսիայի:

Կուռ տրամաբանությամբ և եզրահանգումներով, համոզիչ փաստարկներով ու ինքնատիպ վերլուծություններով գրված Մ. Ներսիսյանի ուսումնասիրությունները, պատմության կեղծարարներին ուղղված տեղին ու անվրեպ խոսքը հիանալի ուղեցույց է այսօրվա և գալիք սերունդներին՝ պատմությունը ճիշտ գնահատելու ու գիտական բարեխղճության դիրքերից այն աղավաղումներից զերծ պահելու համար: Նրա մտքերն ու խորհրդածությունները ցանկացած հիմնահարցի վերաբերյալ, անգամ հեռավորությունից, մեզ են ներկայանում թարմությամբ և արդիական հնչեղությամբ, որոնք երբեք չեն կորցնի իրենց նշանակությունը:

ОСВЕЩЕНИЕ НЕКОТОРЫХ ВОПРОСОВ ИСТОРИИ ГЕНОЦИДА АРМЯН В ИССЛЕДОВАНИЯХ АКАДЕМИКА МКРТИЧА НЕРСИСЯНА
(К 100-летию со дня рождения)

ЭДУАРД МЕЛКОНЯН

Р е з ю м е

Исследования, посвященные геноциду армян, являются частью историографического наследия академика М. Нерсисяна. Освещая данную проблему, М. Нерсисян заложил краеугольный камень, на котором в дальнейшем строилось научное исследование геноцида армян. На должном уровне и с большой ответственностью, основываясь на архивных материалах и исследуя различные источники, патриот-историк отвергает те антинаучные теории фальсификаторов, согласно которым геноцид – это выдумка армян и его главной причиной являются армянские "восстания". При этом он в качестве свидетелей выдвигает страны, отвергающие геноцид. Ссылаясь на немецкие и турецкие источники, М. Нерсисян доказывает, что в годы Первой мировой войны в Османской империи на самом деле имели место массовые погромы армян – геноцид – чудовищный по жестокости и варварству и осуществленный по заранее намеченному плану. Исследования, сопровождаемые убедительными доводами и оригинальными анализами, уместное и точное слово академика М. Нерсисяна, обращенное к фальсификаторам истории, может стать замечательным путеводителем для исследователей нынешнего и следующих поколений.

THE TREATMENT OF SOME QUESTIONS OF THE HISTORY OF THE ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF ACADEMICIAN MKRTICH NERSISSYAN
(To the 100th birth anniversary)

EDWARD MELKONYAN

S u m m a r y

Researches dedicated to the Armenian Genocide are the part of academician M. Nersissyan's historiographic heritage. By researching the problem M. Nersissyan laid the corner-stone on which the scientific investigation of the Armenian Genocide would raise, and he himself was the first who claimed about it. Basing on various sources and archive documents with great responsibility and deserving scientific level, the patriot-historian denied the theories, that the Armenians themselves invented the genocide, and that the main reason for it were the Armenians' “revolts”. He refers to the countries denying the Armenian Genocide presenting facts saved in their own archives. Referring to German and Turkish sources M. Nersissyan proved that there had really taken place massacres of Armenians during the World War I in the Ottoman Empire. It was a genocide carried out with great cruelty and barbarism due to a plan made beforehand. His works written with convincing arguments and original analyses and his words addressed to falsificators of history can be a guide-book for the generations of today and tomorrow.